Որոշում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2011թ. մարտի 30-ի նիստի

Արձանագրություն թիվ 11

Լսելով և քննարկելով «Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացը համալսարանում» հարցը /զեկ. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի ղեկավար՝ Կ. Ե. Վարդանյան/ համալսարանի խորհուրդը որոշում է.

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին կենտրոնի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Նպաստել համալսարանի գիտահետազոտական կառույցների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, այդ նպատակով կարիքների հետազոտման և մշտադիտարկման ձևաչափերի ստեղծում:
3. Ապահովել ուսումնական և գիտական գործընթացների միասնությունը և փոխկապակցվածությունը համալսարանում իրականացվող գիտական հետազոտություններում դասախոսների, մագիստրոսների, ասպիրանտների և հայցորդների կողմից ստացված գիտական արդյունքների ներգրավմամբ:
4. Նպաստել գիտական ներուժի զարգացմանը, միջազգային գիտական ծրագրերում նրա արդյունավետ օգտագործմանը և ինտեգրմանը:
5. Ակտիվ մասնակցություն ցուցաբերել կրթական բարեփոխումներին, հատկապես՝ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի գիտական ապահովման և արդիականացման առումով:
6. Համագործակցել համալսարանում հրատարակվող գիտական ամսագրերի, հանդեսների խմբագրական-հրատարակչական խորհուրդների հետ, ուղղորդել և նպաստել այդ բնագավառում աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:
7. Նպաստել դրամաշնորհային տարբեր ծրագրերում համալսարանի գիտական ներուժի ներգրավմանը:
8. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կազմում ստեղծել
   - Տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտ
   - Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա

Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան